ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 4-րդ և 5-րդ մասերի, 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի ութերորդ մասի 5-րդ և 15-րդ կետերի, 39.5 հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 7.1 կետի 3-րդ ենթակետի, 7.4 կետի 2-րդ ենթակետի, 7.5, 7.6, 7.7, 7.8, 12.1, 13.2, 14.1, 14.2 կետերի, ինչպես նաև 17.3-րդ կետի 5-րդ և 27-րդ ենթակետերի պահանջներով,

հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամներ և կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստող փաստաբաններ (կարգապահական գործը նախապատրաստող անձինք) ընտրելու անհրաժեշտությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 2021 թվականի մարտի 6-ին (շաբաթ օր), ժամը 09^{30}-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1.1. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.

1.2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն:

2. Սահմանել, որ՝

2.1. Օրակարգային հարցերով քվեարկությունը (ընտրությունը) սկսվում է 2021 թվականի մարտի 6-ին, ժամը 09^{30}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17^{30}-ին.

2.2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2021 թվականի փետրվարի 6-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի փետրվարի 11-ին (ներառյալ).

01 փետրվարի 2021թ.
թիվ 15-Լ

2.3. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2021 թվականի փետրվարի 12-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի մարտի 4-ին, ժամը 18^{00}-ին:

3. Հաստատել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի ծանուցման ձևը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

4. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝

- *ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի մասին ծանուցել փաստաբաններին էլեկտրոնային փոստով ծանուցումն ուղարկելու, 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթում ծանուցումը տպագրելու, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի ինտերնետային կայքէջում և վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան փողոց 7-2) հայտարարությունների ցուցափակին ծանուցումը հրապարակելու միջոցով.*
- *օժանդակել հաշվիչ հանձնաժողովին՝ ժողովի կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման համար, այդ թվում՝ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

01 փետրվարի 2021թ.
թիվ 15-Լ
ք. Երևան

Հավելված թիվ 1
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.02.2021թ. թիվ 15-Լ որոշման

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին

ք. Երևան, Զաքյան 7-2 01.02.2021թ.

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ ***2021 թվականի մարտի 6-ին (շաբաթ օր), ժամը 09^{30}-ից Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.***

- ***ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.***
- ***ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն:***

1. Օրակարգային հարցերով **<u>քվեարկությունը</u>** սկսվում է **2021 թվականի մարտի 6-ին, ժամը 09^{30}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17^{30}-ին**:
2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **<u>թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)</u>** սկսվում է **2021 թվականի փետրվարի 6-ից (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի փետրվարի 11-ին* (ներառյալ)**:
3. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց **<u>թեկնածուների քարոզչությունը</u>** սկսվում է **2021 թվականի փետրվարի 12-ից* (ներառյալ) և ավարտվում է 2021 թվականի մարտի 4-ին, ժամը 18^{00}-ին**:
4. **2021 թվականի մարտի 5-ը համարվում է լռության օր:**
5. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

---

* Վրիպակն ուղղվել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 09.02.2021թ. թիվ 19-Լ որոշմամբ